ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի նախագահության տակ հունիսի 28-ին, երեքշաբթի օր, երեկոյան ժամը 6-ին, Վեհարանում գումարվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի հերթական նիստը։

Ժողովին մասնակցում էր նաև վերջերս Մայր Աթոռ ժամանած Հնդկաստանի և Հեռավոր Արևելքի Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը՝ որպես անդամ Գերագույն Հոգևոր Խորհրդի։

Վեհափառ Հայրապետը հանուն Գերագույն Հոգևոր Խորհրդի ջերմորեն ողջունեց Հայկազուն սրբազանի ներկայությունը ժողովում։

Այնուհետև Հայրապետական պատվիրակը ամփոփ կերպով ժողովին ներկայացրեց Հնդկաստանում և Հեռավոր Արևելքում շուրջ երկամյա իր գործունեության զեկուցագիրը, որն արժանացավ բարձր գնահատության Վեհափառ Հայրապետի և Գերագույն Հոգևոր Խորհրդի կողմից։

Վեհափառ Հայրապետը Գերագույն Հոգևոր Խորհրդի սույն նիստում հայտնեց իր ցանկությունը և որոշումը գերաշնորհ Հայկազուն արքեպիսկոպոսին հրավիրելու մշտական աշխատանքի Ս. Էջմիածնում՝ կոչելով նրան Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետի և Մայր Տաճարի լուսարարապետի բարձր պաշտոններին, միաժամանակ պահելով նրա Հնդկաստանի և Հեռավոր Արևելքի Հայրապետական պատվիրակի հանգամանքը և պաշտոնը, որը գերաշնորհ սրբազանը կկատարի պարբերական այցելություններով։

Վեհափառ Հայրապետը հայտնեց նաև իր որոշումը Մայր Աթոռում հաստատելու կարեվոր և պատասխանատու մի պաշտոն՝ Ս. Էջմիածնի գանձատան տեսչի։ Գանձատան տեսուչ նշանակվեց գերաշնորհ Տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյանը։

Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները խանդավառ ուրախությամբ ողջունեցին Վեհափառ Հայրապետի սույն որոշումները և շնորհավորեցին գերաշնորհ սրբազան հայրերի նոր պաշտոնները։